ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՀԵ ԵՍԱՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Եսայան,

ի պատասխան Ձեր 14.12.2023թ. հ.064 գրության՝ տեղեկացվում է, որ 2023 թվականի նոյեմբերի 13-ին կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Կենտրոն վարչական շրջանի Պուշկինի փողոց հ.38 շենքի հ.2 հասցեում հանրային սննդի կազմակերպումը և իրացումը, ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի վաճառքն իրականացվել են առանց համապատասխան թույլտվության, ինչպես նաև վերոհիշյալ հասցեում «Այ Սիրուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից առևտրային գործունեության իրականացման ընթացքում՝ ժամը 23:00-ից հետո հնչած բարձր երաժշտությամբ խախտվել են լռության կանոնները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով, որ քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակիցների կողմից վարչական իրավախախտումների կատարման պահին հնարավոր չի եղել կազմել համապատասխան արձանագրություններ՝ վարչական իրավախախտումներ կատարած սուբյեկտ հանդիսացող՝ ընկերության տնօրեն Գոռ Մուշեղյանի տարածքից բացակայելու պատճառով՝ ծառայության կողմից գրավոր ծանուցագրեր են ուղարկվել վերջինիս՝ հրավիրելով իրեն կամ իր կողմից լիազորված անձին ներկայանալու Երևանի քաղաքապետարանի 2-րդ վարչական մասնաշենք (Բուզանդի փողոց հ.1/3, 7-րդ հարկ, հ.706 սենյակ) 2023 թվականի դեկտեմբերի 1-ին ժամը 12:00-ին կայանալիք գործերի քննարկմանը, մասնավորապես՝ վարչական իրավախախտման փաստերի կապակցությամբ համապատասխան արձանագրություններ կազմելու գործընթացին մասնակցելու, ինչպես նաև բացատրություններ և պարզաբանումներ տալու նպատակով:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ընկերության տնօրեն Գոռ Մուշեղյանը պատշաճ իրազեկված չի եղել գործի քննարկման վերաբերյալ, իսկ վարչական իրավախախտման փաստի արձանագրումը՝ համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 255-րդ հոդվածի, կազմվում է վարչական իրավախախտում թույլ տված անձի ներկայությամբ կամ վերոհիշյալ ընթացակարգով՝ գործի քննարկման վերաբերյալ սուբյեկտի կողմից պատշաճ իրազեկված լինելու դեպքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը ծառայության կողմից նոր ծանուցագրեր են ուղարկվել վարչական իրավախախտում թույլ տված սուբյեկտին 2024 թվականի հունվարի 3-ին ժամը 10:00-ին կայանալիք գործերի քննարկմանը մասնակցելու վերաբերյալ:

Տեղեկացվում է նաև, որ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարության կողմից «Այ Սիրուն» ՍՊ ընկերության տնօրենը գրավոր զգուշացվել է բնակչության անդորրը չխանգարելու և համակեցության կանոնները պահպանելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ